ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿ - *ԳՀԾՁԲ-ՇՏՑ-19/1* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.04.2019թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Սեփոյանը, Լ.Հովհաննիսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՇՏՑ-19/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ (ք. Երևան, Չարենցի 1)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ**-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ**-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան :

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
				<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ
1	ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության շենքում գտնվող տեղեկատվական ցանցերի տեղակայման ծառայություններ	1	5589720	3642200
2	ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային	1	2410280	1743000

	քննչական վարչության Վեդիի քննչական բաժնի շենքում տեղեկատվական ցանցերի տեղակայման ծառայություններ			

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>>ՓԲԸ**-ին:

2.Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ.Սեփոյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ. Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան